# ԾԱՂԻԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆԴԷՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲՆԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԵՒ ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԸՐՋԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ

Ա. ՏԱՐԻ. Ա. ԸՐՋԱՆ — 1862 — ԹԻՒ 10. ՅՈՒՆԻՍ 20

Հրատարակի ամսոյն երկու անգամ. Վեցամսեայ գինն է 8 ֆրանք. Իզմիրէն դուրս ճամբու ծախքը միատեղ 9 ֆրանք. Ստորագրութիւնները շրջանին սկիզբէն կըսկսին. Հանդեսիս ուղղուած անվճար նամակ կամ ծրար չընդունուիր.

Ստորագրութեան տեղերն են. Իզմիր՝ Ցալիկի գրատենակը, Կիլիթ խան, Թիւ. 3. Կ. Պոլիս, մեծարգոյ Խ. Թ. Գալչենտէրեանին ատենակը. Պալըգ պազար կամուրջին գլուխը.

Հալէպ, մեծարգոյ Յ. Ս. Փիւրքճեանօֆ. Փարիզ, M. A. Mourad, Rue du Dragon, 26. Մանչեսթեր, D. Ekisler, George Street, 78.


## ԲԱՐՈՅԱԿԱՆ

### ՀԱՄԱՌՕՏ ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ

(Տե՛ս թիւ 9. էրես 66).

Ե.

Բարեկամաց հետ վարուելու կերպ. —

1. Բարեկամութեան հիմն է կարծեաց և փափաքանաց իրարու նման ըլլալը, զիրար յարգելն ու իրարու հաւատարմութիւն ունենալը.

2. Բարեկամութեան մէջ իրարու դէմ խօսիլ պէտք չէ. իրարու կարծիքը պաշտպանելու է և զիրար սիրով խրատելու է։

3. Եթէ բարեկամդ թշուառութեան մէջ իյնայ աճապարէ՛ անոր օգնելու, ինչպէս որ յառաջ անոր յաջողութեանը ժամանակ հետն էիր։

4. Իմաստուն ու խոհեմ բարեկամները բնաւ իրարու չեն նախանձիր, այլ միշտ զիրար ճշմարիտ սիրով կը սիրեն և կը յարգեն, որով բարեկամութիւննին ամուր ու հաստատուն կըլլայ։

5. Բարեկամութեան մէջ եղած զգացումը միայն բարեկամաց անձին վրայ չկայանար, հապա ինչ բան որ ուղղակի կամ անուղղակի բարեկամինն է, անոնց վրայ ալ կը տարածի. ուստի մեր բարեկամին ունեցած ինչքը, պատիւը, կեանքը, առողջութիւնը, կինը, տղայքը, ծառայները և այլն ասոնք ամենն ալ բարեկամութեան հովանիին ներքև կը մտնեն, ամենն ալ մեզի սիրելի ըլլալ պէտք են. Թէ որ մարդ մը ասոնց մէկուն դպչի՝ բուն իսկ մեր բարեկամին անձին դպածի պէս՝ պարտաւոր ենք պաշտպանել։ Բարեկամին վերաբերեալ բաներուն վրայ սէր չունենալը՝ բարեկամութեան վերջացած կամ գոնէ պաղած ըլլալուն նշան է։

6. Միայն բարեկամդ կրնայ քու պակասութիւնդ քեզի իմացնել՝ առանց քու անձնասիրութեանդ (խաթրիդ) դպչելու. քեզի հետ անտարբերութեամբ տեսութիւն ընող մարդը՝ եթէ վըրադ պակասութիւն մը տեսնէ՝ քեզի իմացնելու հոգ չըներ. թող այս, եթէ պակասութիւնդ ըսելու ըլլայ՝ քեզի կը դպչի։

7. Բարեկամ մը ունենալը՝ կոնակ ունենալ ըսել է. ուստի աղէկ նայէ որ չկորսնցընես զնա։

8. Բարեկամաց մէջ ամէն բան հասարակաց պէտք է որ ըլլայ, և մեր բարեկամը մեր անձին պէս կը պարտաւորինք սիրել: Ահա պատմութիւն մի՝ որ գուցէ բարեկամութեան էութիւնը չգիտցողը չի հաւատայ. "Եւդամիդաս Կորնթացին՝ երկու բարեկամներ ունէր, որոնց մին էր Քարիսենոս Սիկիոնացին և միւսը Արիգէոս Կորնթացին: Ինքը աղքատ մարդ մի էր, մեռնելու ատենը՝ իւր բարեկամաց, որոնց հարուստ ըլլալը լաւ գիտէր, այսպէս կտակ կընէ.

"Արիգէոսի կը յանձնեմ մայրս որ նայի և "սնուցանէ ու ծերութեան օրերը հանգիստ անց" ցընել տայ. Քարիսենոսին ալ կը յանձնեմ որ՝ "կրցածին չափ օժիտ տալով աղջիկս կարգէ: Թէ "որ այս երկու բարեկամներէս մին՝ ասոնք չկատա" րած մեռնի՝ մեռնողին ապրածն՝ թող ողջ մը" նացողը կատարէ":

Այս կտակիս վրայ՝ ճշմարիտ բարեկամութեան ուժը չգիտցող մարդիկ շատ խնդային և կտակը գրողը ծաղր կընէին. բայց կտակագրին բարեկամներուն երկուքն ալ կտակը սիրով ընդունեցին:

Ասոնցմէ մին, Քարիսենոս, հինգ օրէն մեռաւ. Արիգէոս, կտակին համեմատ, մեռած բարեկամին մայրը իւր տունը տարաւ. ինքը մէկ հատիկ աղջիկ ու հինգ տաղանդ հարստութիւն ունէր. երկու տաղանդ ու կէսը իւր աղջկանը օժիտ տուաւ, մնացած երկուքուկէսն ալ Եւդամիդասին աղջկանը, և երկուքին ալ հարսանիքը մի և նոյն օրուան մէջ կատարեց":

9. Հարկը պահանջած ատեն՝ պարտաւոր է մարդ՝ իւր բարեկամին օգնութեան հասնիլ, ձախորդութեանց և տրտմութեանց մէջ զնա մխիթարել, անոր պատիւը պաշտպանել, ուրիշին առջև անոր պակասութիւնները և անկատարելութիւնները պարտկել գոցել:

10. Այնպիսի ծանր ու փափուկ խորհուրդ մի՝ որ մեր հաւատարիմ խորհրդապահութեանը յանձնուած է, պէտք չենք յայտնել մեր բարեկամին՝ որ մի գուցէ նա ալ ուրիշի մը ըսէ և այսպէսով բերնէ բերան անցնելով հրապարակուի:

11. Պուպլիոս Միրոս բանաստեղծը այս խրատը կուտայ՝ թէ "Բարեկամիդ հետ այնպէս վարուէ, որպէս թէ ետքը կրնայ քեզի թշնամի ըլլալ". բայց աւելի ճշմարիտ բարեկամութենէ դուրս խրատ մի է:

12. Առանց մտածելու ամէն մարդ քեզի բարեկամ մի ընտրեր:

13. Սուտ բարեկամներ կան, նման այն թռչուններուն, որոնք ձիւնը և սառոյցը մօտեցածին պէս կը հեռանան՝ Գարնան ժամանակ նորէն գալու համար. ասոնք ալ իրենց բարեկամը ձախորդութեանց մէջ տեսած ժամանակնին՝ անոր քովէն կը հեռանան. իսկ եթէ դարձեալ յաջողութեան մէջ տեսնեն զնա, անորմէ աղէկը չըլլար, այն ժամանակ նորէն անոր քով կը վազեն:

14. Բարեկամութեան մէջ, զուարճանալու համար, թեթև կատակներ ներելի է ընել:

15. Բարեկամիդ չսիրած մարդը՝ իրեն առջևը մի գովեր:

16. Անոր չախորժած խաղերը մ'առաջարկեր, և կամ մի ստիպեր որ խաղայ:

17. Բարեկամ է ըսելով՝ տուած խոստման վրայ չկենալը քաղաքավարութեան դէմ է:

18. Բարեկամին պակասութիւնը կծու խօսքերով երեսին տալը տմարդութիւն է.

19. Եթէ բարեկամ մը հիւանդանայ՝ այցելութիւն ընել պէտք է անպատճառ:

20. Բարեկամներու երբէք կեղծաւորութիւն բանեցնել պէտք չէ, միշտ անկեղծ եղիր:

21. Քու բարեկամներդ ազնիւ, բարեբարոյ և խոհեմ անձեր ըլլան, քանզի մարդու մը ինչ ըլլալը իւր բարեկամներէն կիմացուի: Բանաստեղծ մի կըսէ. "Ըսէ քու բարեկամներդ և ըսեմ ինչ ըլլալդ":

22. Այնպիսի գաղտնիք մի՝ որ քու կորստեանդ պատճառ կրնայ ըլլալ երբոր յայտնուի, պէտք չէ քու բարեկամիդ յայտնել:

23. Բարեկամին օրինաւոր կամքը կատարելը և զայն վշտացընելը քաղաքավարութիւն չէ:

24. Վասն շահի բարեկամ ըլլալը անձնասիրութիւն է:

25. Նոր բարեկամը հինէն վեր բռնելը մարդութիւն չէ:

Բարեկամ հին
Գանձ է անգին:

## ԱՌԱԿ

### Մարդ եւ Օձ

Մարդուն մէկը օձ մը տեսաւ.
Ո՛վ չարագործ գազան, ըսեմ դոնէ, ըսաւ,
Գործք մ'ամէնուն հաճոյական:
Փանտ կենդանին ասոր վըրան,
(Օձը կ'ուզեմ այս տեղ ըսել,
Եւ ոչ մարդը, զի խիստ դիւրին է շփոթել)
Բռնուելով,

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

# ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԻՒՆ

Հիւֆլանտ՝ իւր Արուեստ երկարելոյ կենաց մարդոյ, ըսուած գրքին մէջ հետեւութիւն մի կը հանէ թէ մարդս կը ծնի երկու դար (200 տարի) ապրելու յարմար գործարանաւոր կազմութենով մի։ Յայտնի է որ անասուն մի՝ իւր բոլոր զգայարանութիւնները վրան եկած և իւր կատարեալ աճումը առած ժամանակէն ութն անգամ աւելի կապրի. արդ՝ մարդս, հասարակօրէն, իւր քսան և հինգերորդ տարին բնական կատարելութեան կը հասնի, և այս՝ յայտ յանդիման երկու հարիւր տարիներու տեւականութիւն մի կը ցուցընէ։

Այս նկատումները կարելի է հաստատել՝ մէկ ու կէս դար և աւելի երկար ապրող անձերու բազմաթիւ և վաւերական օրինակներով.

Յամին 1670, Հէնրի Ճէնքէնս, հարիւր վաթսուն և ինն տարուան մեռաւ, Անկլիոյ Եօրգի կոմսութեան մէջ։ Այս մարդը տասներկու տարեկան եղած ժամանակ Ֆլոտէնֆիլտի պատերազմին մէջ գտնուեր է։ Հազար 815ին, Ժան Պօվէն Բօլոնիացին, հարիւր եօթանասուն և հինգ տարեկան հասակին մէջ իւր ընթացքը լմնցուց, հարիւրամեայ և աւելի տարօք զաւակներ թողլով։ Կրնանք նաև յառաջ բերել Ժոզէֆ Սիւրէնթօնը, որ 1797ին Պերկէաին (Նորվեկիա) մօտ փոքրիկ աւանի մը մէջ մեռաւ հարիւր վաթսուն տարուան, շատ անգամ Քաղաքապետ եղած էր այս մարդը։ Իւր անդրանիկ որդին հարիւր հինգ տարեկան էր, իսկ կրտսերը (ամենէ պզտիկը) ինն տարուան։

Սեամորթի մը երկարակեցութիւնը ամենանշանաւորն է. ասիկա երկու հարիւր տասը տարի ապրեցաւ։ Եւրոպայի մէջ կենաց երկարութիւնը՝ երբէք մինչև այս թիւը հասած չէ։ Անկլիան, Շուետը, Նորվեկիան և Տանիմարքան, ահա ամենէն շատը ասոնց մէջ կը գտնուի երկարակեցութեան օրինակներ։ Խիստ նշաւորներէն կը յիշուին հետեւեալները, Թովմաս Բարր, որ հարիւր յիսուն և երկու տարուան էր երբ մեռաւ. Լսինկհամ տը Քօրնուայլ, որ հարիւր քառասուն և չորս տարեկան մեռաւ. Տրաքէնպերկ Տանիմարքացին, որ, տասն և հինգ տարիի չափ, Թուրքաց քով գերի ըլլալէ և իննսուն և երկու տարի ալ իբր նաւաստի անոնց ծառայելէ ետք՝ 1772ին մեռաւ, իւր հարիւր քառասուն և վեցերորդ տարին։ Ֆրանսայի մէջ խիստ երկար ապրող մէկը կար՝ որ էր այն ծերունի զինուորը, որ այս դարուս մէջ Փարիզ մեռաւ, հարիւր քսան և հինգ տարեկան. ասիկայ Լուի ԺԴ.ին, Վիկթուար ըսուած տեղը եղած առաջին արձանին կանգնման ներկայ էր։ Իտալիան, Սպանիան, Փորթուկալը, Գերմանիան, Զուիցերին և, Ֆրանսային պէս, այս բանիս նկատմամբ մեծ յաջողութիւն չունին։

Մեր յառաջ բերած օրինակները՝ Հրէից պատմութեան մէջ պատմուածները հաւատալի կընեն։ Աբրահամ հարիւր եօթանասուն և հինգ տարի ապրեցաւ, Ճիշդ Ժան Պօվէնի տարին. Իսահակ, հարիւր ութսուն տարի. Յակոբ, հարիւր քառասուն և եօթն. Յովսէփ, հարիւր տասը. Մովսէս, հարիւր քսան. և այս վերջինը իւր ատեն մարդու կեանքը մինչև ութսուն տարի տեւելուն վրայ կը տրտնջէր։ Իսկ հին նահապետներուն գալով, եթէ գիտնոց կարծիքը ընդունելու ըլլանք որոնք այն ժամանակուան տարին երեք ամիս էր կըսեն, Մաթուսաղայի ինն հարիւր տարին, երկու հարիւր քսան և հինգի կիջնէ։ Այս ալ ստոյգ է որ նախնիք իրենց ժուժկալութեամբը, անխառն և պարզ բարքովը և աստանդական կեանքովը՝ այնչափ յառաջացած տարիք կունենային։

Երկար ապրելու տեսակին, զբաղումներու կերպին, մարմնոյ վարժութիւններ ընելու սովորութեան, գիւղերու և դաշտերու բնակութեան կենաց երկարատեւութեան վրայ մեծ ազդեցութիւն մի ունենալը չկրնար ուրացուիլ։ Ճգնաւորներու և կրօնաւորներու պատմութիւնը, որոնք խիստ կանոնի տակ և ինքզինքնին նկատողական կենաց տըւած էին, ասոնց պատմութիւնը, կըսենք, երկարակեցութեան բազմաթիւ օրինակներ կընծայէ։ Ս. Պօղոս, հարիւր տասն և երեք տարի ապրեցաւ։ Ս. Անտոն, հարիւր տասն և չորս. Ս. Անաստաս և Ս. Յերոնիմոս ութսունամեայ հասակը անցուցին։

Հին ժամանակուան փիլիսոփաներուն մէջ. Քսենոփիլոս հարիւր վեց տարեկան հասակը ժամանած էր. Տէմոնաքս, հարիւր տասը տարեկան. Եպիմէնիդէս, հարիւր յիսուն և եօթն տարի ապրեցաւ, կըսեն. Գէօրգիաս, հարիւր ութը. Դիմոկրիտէս, հարիւր ինն. Զենոն, հարիւր. Իսոկրատ, իննսուն և ութը։ Նոր արդի ժամանակներս, Քէբլէր, Պաքոն, Նիւտոն, Լօքէր, Քանթ,

---

Նը գրէթէ միշտ յաղթօղ կռուող մը կ՚ըլլայ. բայց ան որ չկրնար երկար տեւողութիւն մը ունենալ, և փոք կամ անպայման վերջացեալ ծերութենէ կը յաղթուի։

Ծ. Թ.

մանակը ըլլալն է · բայց որովհետև պարզամիտ և ագէտ ժողովուրդները՝ այս կերպ յարաբերութիւնները՝ գրեթէ միշտ իբր պատճառէ յառաջ եկած կը սեպեն, այս պատճառաւ Սիրիոս աստեղ սեպհականելու չզանգաղեցան, Նեղոս գետին ջրերուն յորդութիւնը և անոր սեպհական բոլոր երևոյթները ։ Նախապաշարումը Եգիպտոսէն անցաւ Յունաստան, Յունաստանէն Հռովմ, ուսկից Եւրոպա և բոլոր աշխարհ տարածուեցաւ ։ Պլինոս բնագէտը (որուն բոլոր գիտութիւնը՝ վերջին աստիճանի ճշգութեամբ և կատարեալ պարզմտութեամբ մի իր ժամանակուան մէջ եղած բոլոր վէպերը, առասպելները գրելու վրայ կը կայանայ) Շնիկ աստղը՝ ամեն տեսակ ցաւերու և տրտմութեանց պատճառ կը նկատէ, և գետի ու ծովի ջրերուն՝ իրեն սեպհական զօրաւոր յատկութենէն հաղորդող կ'ամբաստանէ զայն ։

Շնիկ աստեղ օրերուն ազդեցութիւնը, երբեմն Եգիպտոսի մէջ գոնէ ըստինքեան երևոյթ մի ունէր ։ Եւ արդարև, հինգ հազար տարի յառաջ, Սիրիոս աստեղ մերձակէար ժամանած առենն էր, Եգիպտոսի համար, Յունիս 20 ը, և գրեթէ ամառնային արևադարձին հետ միատեղ կը հանդիպէին ։ Բայց այս ժամանակէս սկսեալ, Երկրական յետախաղաց շարժումը, որուն Կանխումն Գիշերահաւասարներու անուն կուտան աստղաբաշխք, հետզհետէ Շնիկ աստեղ օրերը յառաջ մղեց․ այնպէս որ, գրեթէ երեք հազար տարի յառաջ, խիստ տաքութեանց միջոյին տեղի կունենար․ այս տաքութեանց ժամանակ հասարակ կ'ըլլան՝ ամառնային եղանակին յարմար եղած մի քանի հիւանդութիւններ ։ Այսօրուան օրս Շնիկ աստեղ օրերը Յուլիսի 24 րն կ'ըսկսին և մինչև Օգոստոս 24 կը տևեն, գրեթէ մի ամսուան միջոց, որ վերջին աստիճան ջերմութեանց ժամանակը չէ և հետևաբար բնաւ նշանակութիւն մի չունի ։ Բայց նախապաշարումը մինչև ցայսօր միշտ կը գիմանայ, և դեռ կը շարունակուի այն կարծիքը թէ Շնիկ աստեղ օրերը գէշ օրեր են ։ Երևելեաց մէջ կարծիք մի կայ թէ՝ Շնիկ աստեղ օրերը ՝ջուր- մըտնողը՝ անպատճառ երեսին կամ մարմնոյն վրայ բիծ մի կ'ըստանայ և այս բիծը անջնջելի կ'ըլլայ․ շատերը, ասոր համար, կը վախնան ծով մանելու, զարմանալի բան ։

Բուն ճշմարտութիւնը այն է որ ամառուան սաստիկ տաքերը, և սոյն եղանակին մէջ սաէպ պատահող փոթորկալի օդերը, կենդանեաց, բուսոց և անկեց վրայ զգալի ազդեցութիւններ կը ներգործեն, և շատ մարդիկ ևս նոյն ազդեցութեանց ենթակայ կըլլան, ասոնց ազդման տակ մի քանի որոշեալ հիւանդութիւններ խիստ դիւրութեամբ կընդարձակին և աւելի ուժգնութիւն կառնուն ։ Նոյնպէս սա ևս ճշմարիտ է որ այս խիստ ջերմութեանց ժամանակ՝ պէտք է որ մարդ խիստ զգուշութիւն բանեցնէ ծով մանելու ժամանակ, և ըստ բաւականի մարմնոյն քրտինքը չորցընելէ ետք՝ մանէ, մանաւանդ ցուրտ ջրոյ մէջ, ինչպէս են աղբիւրներուն ջրերը ։ Քրտինքը չանցած և շունչը վրան եղած ժամանակ, շուտով մի ջուր նետուիլը, կրնայ ամենամեծ հիւանդութիւնք պատճառել ։ Պէտք չէ նաև կերակրէն ետք՝ ջուր մանել, մինչդեռ մարսողութեան գործողութիւնը կատարուելու վրայ է ։ Աղհուն կամ անոյուն, վճիտ կամ անմաքուր ջրոյ մէջ լուացուելոյն ազդեցութեան վրայ անտարբեր ըլլալ պէտք չէ ։ Լճացեալ և աղտեղութեամբ խառն ջրերը, միշտ վտառողջ են և իրենց բարձր օդոյ բարեխառնութիւնը ևս կրնայ աւելցնել իրենց զօրաւոր յատկութիւնները · · · ։ Դարձեալ կըսենք ու կը կրկնենք թէ ասոնք Շունին հետ գործ չունին ։

Շատ կը բաղձայինք որ Օրացոյց կամ Տօմար շինողները յետ այսօրիկ Շնիկ աստեղ օրերուն յայտարար նշանը բոլորովին ջնջէին ։ Որովհետև ուրիշ բանի չծառայեր այն, հապա հասարակութեան մէջ քիմերական (մտածին) երկիւղներ մըտցընելու, և մշանջենաւորելու այն ծուռ և սխալ գաղափարները, որոնց արմատաքի լինելնուն համար աշխատիլ պէտք ենք ընդհակառակն ։

Քաղուած․

Ը. — Ի՞նչ է ինքնահաւանութիւնը.

Ը. — Պարզօրէն ըսելով ինքնահաւանութիւնը այնպիսի մոլութիւն մի է, որ միմիայն ինքզինքը չ'ճանչող մարդուն վրայ կը գտնուի · և այնպիսի ախտ մի՝ որ մարդս գրեթէ կը կուրցընէ, և անոր աչաց ծուռ կամ ներհակ կը ցուցընէ ամեն բան ։

Սոյն այս մոլութեամբ վարակեալ անձը, ոչ բարեկամ կը նայի, ոչ բարերար, զամենքը անխտրաբար կատաղի շան պէս կը խածնէ և թունաբոյր իժի նման դիմացը ելնողը գաղանաբար կը խայթէ, առանց աջ և ահեակ նայելու ։ Անմիտ է ինքը և չ'կրնար մտածել փոքրիկ գործողութիւն մի ըրած ժամանակը ևս, որովհետև ինքնահաւան է · իր ինքնահաւանութեան և սնափառութեան իրաւամբ գպչողին անգամ խնայողու-

Գաղղիերէնի մէջ
Թագուհի Չեվահիրճեան
Խոսրովուհի Չեվահիրճեան
Մարիամ Չերմակեան
Տուտու Ա. Մաքսուտեան

և ուրիշ անգամ աւելի փառաւոր կերպիւ խօսելու բարեբաղդութիւն ունենալնին հիմակուընէ կը յայտնէ ։

— Պարգեւաբաշխութեան հանդէսը վերջացաւ, ամեն պարգեւները բաշխուելէն ետք՝ Սրբազան Առաջնորդ Հօր բարեմաղթու խօսքերովը ու հայրական օրհնութիւններովը ։ —

Այլ եւ այլ խորհրդածութիւններ ։

Մարդս եղեգ մի է, բնութեան ամենատըկարը, բայց խորհուն եղեգ մի ։ Հարկ չ'կայ որ բոլոր տիեզերք զայն խորտակելու համար զինուին ։ Շոգի մը, ջրոյ կաթիլ մի բաւական է զանի սպաննելու ։ Բայց երբոր տիեզերքը զինքը խորտակէ, մարդս դարձեալ զինքը սպաննողէն ազնուական է, որովհետեւ մեռնիլը գիտէ նա. և տիեզերաց իր վրայի ունեցած առաւելութիւնը միայն զայս չ'գիտնալն է ։

Այսպէս բոլոր մեր արժանաւորութիւնը մեր խորհելուն մէջ կը կայանայ ։

Քիչ մը բան զմեզ կը մխիթարէ, որովհետեւ քիչ բանը զմեզ կը վշտացընէ ։

Բասգալ.

Աստուածսիրութիւնը՝ անձնասիրութեան բարի զգացումն է ։ Ագաթէ.

Բարեկամաց չ'վստահիլը՝ անոնցմէ խաբուելէն աւելի ամօթ է ։

Խաբուելու ճշմարիտ միջոցն է, զմեզ ուրիշներէն աւելի խորագէտ կարծելը ։

Ճշմարիտ համեստ մարդը բանէ մի չ'առնուիր ։

Լա Ռոշֆուքօ.

Մեր գլխաւորները, որ Ազգը կառավարելու պահանջանքը ունին, երանի՜ թէ, գոնէ ժողովրդէն աւելի լոյս և խելահասութիւն ունենային, երանի՜ թէ... հանճարն, իմաստութիւնն և կենցաղագիտութիւնն են որ զմի այր քան զայլ այր արգոյ և պատկառելի կընեն և ո՛չ թէ կոչումն և ծնունդ ։ Մարդոյ բուն ազնուութիւնը անոր զգացմանց և խորհրդոց վսեմութիւնն է և ոչ թէ արտաքին ճոխութիւնն և շուքը. երանի՜ թէ անգամ մը խորհէին թէ եթէ իրենք հասարակութիւնը վարելու և դատելու իրաւունքը ունին, զիրենք հասկցող ով դատէ պիտի ։ Ըսպէն մարդկութիւնը և Աստուած կը պահանջեն, որ օրէնքը միայն մարդոց վերայ թագաւորէ և ոչ թէ մարդ. օրէնքը պատժէ յանցանքը և պսակէ առաքինութիւնը և ոչ թէ կաթողիկոսը, պատրիարքը և ամիրան. օրէնքը վարէ զկաթողիկոս, զպատրիարք, և զամիրայ. և օրինաց անհնազանդը, ով և ըլլայ, եթէ կաթողիկոս, եթէ պատրիարք, եթէ ամիրայ, թող պատժուին անաչառապէս և հասարակաց թշնամի համարուին ։ Կ. Վ. Շահնազարեան

Փարիզ Լրագրին 69դ թուոյն մէջ ։

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Զմիւռնիա, Յունիս 20, 1862.

Մի քանի դրամոց գիներն ու արժողութիւնը ։

| | Փոխանակագրի սակ. | Թարիֆայի սակ | Չիւրիւկ սակ |
|---|---|---|---|
| | ղշ. փրյ. | ղշ. փրյ. | ղշ. փրյ. |
| Օսմ. լիրա. | 115 1/4 | 123 | 144 |
| Արծ. մէճ. | 22 34/40 | 24 1/4 | 28 1/2 |
| Մահ. խաշ. | 98 1/4 | 105 | 123 |
| Նոր քսան. | 23 30/40 | 25 1/4 | 29 1/2 |
| Անկլ. լիրա. | 125 1/2 | 134 | 157 |
| Շէյլին | 6 | 6 1/2 | 7 1/2 |
| 20 ֆ. ոսկի. | 99 1/2 | 106 | 124 |
| Բ. Իմբէռ. | 101 | 107 | 125 |
| Քարպ. խաշ. | 19 | 20 1/4 | 23 1/2 |
| „ կծոր. | 18 32/40 | 20 | 23 1/4 |
| Քրմից | 58 1/4 | 62 | 72 |
| Մաճառ | 57 1/4 | 61 | 71 |
| Զիւէքլի | 25 | 26 1/2 | 31 |
| Տիրէքլի | 26 | 27 1/2 | 32 |
| Մէտիլան. | 20 3/4 | 22 | 25 |
| Բրուսիան | 17 32/40 | 19 | 22 1/4 |
| Սվանց | 4 | 4 1/4 | 5 |
| Ֆիորին | 3 | 3 1/4 | 3 3/4 |
| Հինգ խս 0/0 | 4 3/4 | 12 1/2 | 30 |
| „ մանր 0/0 | 3 3/4 | 11 1/2 | 30 |
| Վէյնոց 0/0 | 4 1/2 | 12 | 30 |

ՀԱՐԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ
ԳՐ. Պ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ

ԶՄԻՒՌՆԻԱ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՏԷՏԷԵԱՆ